# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am


20.05.2016թ. N 01/22.2/2047-16

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

*Հարգելի տիկին Դոյդոյան*

Ի պատասխան Ձեր՝ 17.05.2016թ. N 284-ի 5 հարցման տեղեկացնում ենք հետևյալը.

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկություն ստանալու հարցումները մուտքագրվում են տարբերակված կարգով (մուտքագրման համար պահանջվող տվյալներում տարբերակող նշում կատարելու տեսքով) և գրանցվում են քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:
2. Տեղեկատվություն ստանալու հարցումների գրանցումը, դասակարգումը, վերջիններիս վիճակագրության վարումը կատարվել է ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության և ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից տեղեկատվություն տրամադրելու կարգերի, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի գործունեության կազմակերպման ընթացիկ աշխատակարգի շրջանակներում:

Հիշյալ գործընթացը սահմանված ժամկետներում համապատասխանեցվում է ՀՀ Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման պահանջներին:

Կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերը:

*Առդիր՝ 17 թերթ:*

*Հարգանքով*

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**Կատարող**՝ տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
☎ 0223 2 73 37